

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ժողովրդական համալսարանը Թիֆլիսում.—Հայոց թատրոնի յիսնամերակի հանդէսը.—Արփիարեան Արփիար. —

ՄԵծ է ժողովրդական համալսարանի նշանակութիւնը ազգերի կրթութեան գործում։ Նա մտքի մշակման այն գործոնն է, որի շուրջը համախմբւում են երթեմն ուղղութեամբ տարբեր խաւերի գործիչներ, միենոյն ժամանակ նա ներկայանում է մի մեջավայր, ուր ժողովուրդը մօտիկից կարողանում է ճանաչել իւր գործիչներին, իւր ցաւերի համար խօսողներին։

Քոանեցորդ գարը իւր գաղափարներով ցնցեց նաև հասարակ ժողովուրդը, որ սկսեց ձգտել զարդացման, զիտութեան լոյսին, որի ժարաւը գառաւ համատարած։ յագուրդ տալ այս աղաղակող պահանջին—այս է ժողովրդական համալսարանի իսկական կոչումը. և այէտք է ասել՝ ժողովուրդը ամեն տեղ շատ սիրով յաճախել է և յաճախում է այդ համալսարանները, ոկտած պատանուց մինչև ալեղարդ ծերունին, օրիորդից մինչև պառաւ տատիկը, առանց գիրքի ու կոչման խարութեան, քովէ քով նստած, լարուած ու շաղըութեամբ հետեւլով դասախոսի ամեն մի խօսքին, ինչպէս երթեմն հաւատացեալ քրիստոնեաները եկեղեցու բեմից ճառող քարոզչին։

Ժողովրդական համալսարանը ունի և բազմակողմանի ծրագիր, նա ընդգրկում է համարեա զիտութեան բալոր ճիւղերը, բոլոր առարկաները. նա գարձնում է զիտութիւնը հանրական, տալով դիւրութիւն ամենքին օգտուելու զիտութեան փրկարար լոյսից. և որ զլմաւորն է ինչ առարկայ, ինչ նիւթ հարցանիրութիւն է զարթեցնում ժողովրդի մէջ, նա կարող է դիմել համալսարան և այդտեղ մատչելի գնով, շատ անգամ ձրի ու իրեն հասկանալի անպատճյն լեզուով ստանալ իւր մտաւոր մնունդը։ Ո՛չ մի կրթական հաստատութիւն այնչափ հեշտութեամբ չի բանում իւր դռները ժողովրդի առաջ, որչափ ժողովրդական համալսարանը։

Նկատուած է, որ ամեն երկուում ժողովուրդը գիմում է համալսարան լսելու առաւել իրեն հետաքրքրող առարկան. օրեանալիայում ամենից շատ նա լսում է երկրագործական դասախոսութիւնները. բըեւսսէլում — սոցիալական խնդիրների շուրջը. Փարեզում—ընթացիկ հրատապ հարցերի մասին և լն։

Մեծ յաջողութիւն ունին ժողովրդական համայնքարանն սերը այժմ Խուսաստանում և ողուս հասարակութեան քամսին մաց մասը լուրջ ու անխռնջ ջանքեր է դործ զնում դոցա բարգաւաճման համար: Տարւոյս սկզբներին Պետերբուրգում տեղի ունեցաւ ժողովրդ: Համալսարանների ղեկավար գործիչների համաժողով, ուր արձարքութեցին այդ հաստատութիւնները ամուբ հիմքերի վրայ գնելու ու ծաղկեցնելու առթիւ շատ հարցեր, ծրագրեր ու խնդիրներ:

Խուս ինտէլիգէնտ հասարակութեան ջերմ վերաբերմունքը գործին մեծ գրաւական է յաջողութեան:

Խնչպէս ամեն մի նոր գաղափար, նայնպէս և ժողովրդական համալսարանի գաղափարը մեզ անցաւ եւրոպայից Խուսաստանի վրայով և անցաւ այն ժամանակ, երբ նորա կարիքը իւր սրութեամբ գագաթնակէտին էր հասել: Ահա շուտով կը անայ մի տարի, որ ժողովրդական այս կենսական հաստատութիւնը բացուած է Թիֆլիսում և ունի բաւականին յաջողութիւն ու համակրութիւնն ժողովրդի մէջ: Նա այժմ արգէն իւր սեկցիաներն ունի, և թիւս որոց և հայկական սեկցիան, ինչպէս նաև 6 գրադիտական-տարրական դպրոցներ, մօտ 500 աշակերտաներով (15-ից մինչև 40 տարեկան): Դասախոսութիւնները անցնում են կանոնաւոր միակ պակասաւոր կողմը նիւթականի սպութիւնն է, քաղաքը օգնում է շատ աննշան գումարով (տարեկան 300 ռ.): Երեկի թէ նիւթականն է պատճառ, որ վերջերս Թիֆլիսում յօդուա ժողովրդ: Համալսարանի կազմուեց մի շքեզ երեկոյթ-հանգէս, որի համար ընտրութեց մասնախումբ քաղաքի գլխաւոր ազգութիւններից (վրացի, հայ, ռուս, թուրք, դերմանացի, լեհացի, հրեայ):

Պէտք է ամեն կերպ աշակցել ժողովրդական համալսարանի բարգաւաճման գործին:

Ժողովրդական մի այլ գործօնն է թատրոնը, մօտ օրերում Թիֆլիսում հայոց թատրոնի ապագայի խորհրդները դարձնուեւին, գործիչներից մէկը հարց բաղմացրեց կառուցուելիք թատրոնին կից շինել նաև ժողովրդական մի լնարան, ուրիշ խօսքով միացնել ժողովրդական համալսարանի և թատրոնի դործը, երբեք ժողովրդին մօտիկ երկու հիմնարկութիւններ է:

Առ հասարակ վերջերս մեղանում յոթելեանական հանգէսները տօնւում են շքեզօրէն, անշուշտ հարկաւոր է յարգանքներ մատուցանել արժանաւորին, բայց ափսոս որ այդ

հանդէսները զգացմունքի ծոլ են միայն ներկայացնում, իսկ դոքնական հետք շատ քիչ են թողնում. հէնց օր, հայոց թաւրոնի յիսնամեակը, ինչով արգեօք հայ հասարակութիւնը յաւերժացրեց այդ տօնը. խօսուեցաւ սեպհ. թաւրոնի մասին, իսկ աղքեւըներ, միջոցներ սատարող չեղաւ:

Սակայն հայոց թաւրոնը սեպհ. շէնքից բացի ուրիշ կարեքներ ևս ունի. նա չունի գերասանների վարժարան-դպրոց. նա իւր բեմի վրայ գիտական և տեխնիկական որոշ սիստեմ անցած գերասաններ չէ տեսնում, այլ գերասանութեան նուիրուող անձինք այդ բեմը շնուռում են իրենց համար դպրոց, որով մեծապէս տուժում է գեղարտւեսան ու հասարակութիւնը: Եւ բաւական չէ, որ մենք «գրամատիքական կուրսեր» ունենանք, եթէ ուզում ենք թաւրոնը իւր իսկական կոչման ծառայէ, որոշ գրամատիքական դասընթացք անցնելուց, բեմ ելնելուց յետոյ ևս հայ գերասանը պէտք ունի կատարելագործուելու թաւրոնի աւելի ծաղկած երկրում, Եւրոպայում: Ճիշտ այնպէս, ինչպէս մեզանում լեզուագէտը, մանկավարժը, պատմաբանն ու աստուածաբանը միջնակարդ դպրոցն աւարտելուց յետոյ գնում է շարունակելու—կատարելագործուելու. և առ հասարակ մեզանում գեղարտւեստին իրենց նուիրած սպասաւորների բարձրագոյն կրթութիւնը շուայլութիւն չպէտք է համարուի ու նոցա համար ևս բարերարների քսակը նոյնչափ պէտք է բացուի, ինչպէս գիտութեան միւս ճիւզերին գիմողների համար: Դժուար թէ կրկնակի օրենակներ լինին հայ սկուլպտորի, սէլլէտրիստի, նկարչի, գերասանի բարերարութեամբ արտասահման ուղարկուելուն:

Ինչպէս անհրաժեշտ է գեղարտւեստի սպասաւոր գերասաններ պատրաստել, նոյնչափ ևս կարեւոր է ունենալ մի սեպհական յարմարաւոր թաւրոն—տաճար, ուր այդ սպասաւորները կարողանային ազատ սպասաւորել Մէլպոմէնին:

Մէր մամուլի մէջ արգէն արձարծուած այս հարցը արժանի է լուրջ ուշագրութեան. նա յատկապէս շեշտուեց հայոց թաւրոնի յիսնամեակի հանդէսին Թիֆլիսում անցեալ յունուարի 28-ին: Այդ օրը արտիստիքական թաւրոնի թէ բեմը և թէ դահլիճը լցուած է եղել շնորհաւորելու և յոբելեանական հանդիսին եկած պատգամաւորներով և հասարակութեամբ: Հանգէսից առաջ ներկայացրել են չորս կտոր հայ ու էպէպէստուարից, կամենալով այդպիսով հայ թաւրոնական պիէսաների զարգացման ֆազերը պատկերացնել: Խաղացել են՝ 1) Գուրգէնը բէկեանի Հաջի Սուլեյման կոմէգիան, որով 1858 թ. յունուարի

28-ին հիմք էր գրուել հայ թատրոնի Մոսկովայում, 2) Սունգուկեանի Պետօ-ի Ա. գործողութիւնը, 3) Ներվանզադէի Պատուի համար-ի Խ գործող, և 4) Ա. Կարոնեանի Մահ պօէման:

Ա. և Բ. ներկայացման միջև պ. 1. Բարայեանը կարդացել է հայոց թատրոնի ընդարձակ պատմութիւնը, իսկ յոբելիանական հանգէսը սկսուել է «Հայոց թատրոն» կենդանի պատկերով, ուր գուրս են ըերուել թատրոնական գործիչներից շատերը՝ Սունգուկեան, Զմշկեան, Աղամեան, Արծրունի, Շեքոպիր, Շիլէր, Խրսէն, Չուզէրման ևայն: Ապա թուով 30-ից աւելի պատգամաւորները մէկ մէկ սկսել են չնորհաւորել հայոց թատրոնի յիսնամեակը: Խուեցել են Թիֆլիսի քաղաքադլուխ Զէրքէզով, ոռւս, վրացի և այլ պատգամաւորներ: Ամբողջ հանգէսը հաճելի տպաւորութիւն է թողել հասարակութեան վրայ:

Մինչ մենք զբաղուած ենք կու լտու րական զանազան այսպիսի ձեռնարկութիւններով, միւս կողմից հայ կեանքի հարեզմանի վրայ երեւում են մութ ու մռայլ կէտեր, որոնք այդ կեանքի վիրոտ, աննորմալ վիճակն են ցոյց տալիս: այդ մռայլ կէտերիցն մէկն է վերջերս մեզանում տարածուած մահափուծերը—սպանութիւնները: սպանում են հայ վաճառականնեն, սպանում են հայ հարստին, հայ երիտասարդ գործչին, հայի մտքի, գրչի մշակին, անխտիր, առանց խզճի ու սառն մտքի առաջ հաշիւ առալու: Արեմտեան հայերի այգօրինակ հիւանդութ գործունէութեան պատկը կազմեց վերջերս հահերէում տեղի ունեցած ռճերը: Արեկ Աւնճեանի, Թավշանեանի սպանութիւններից յետոյ մեզ հասցըին Արփիարեան Արփիարի եղեռնական մահուան լուրը: Այս անգամ դահճի ձեռքից ընկնողը սոսկական մի հայ զբաժամակը, վաճառական, մի բարեգործ չէր, այլ զբական երկարամեայ գործիչ, խօսքի ու գրչի մարդ, եւր երակներն ու ամբողջ էութիւնը հայի հասարակական սեղաննին զոհ բերած մի անուանի անձնուորութիւն:

Փետրուարի 1-ին Եգիպտոսի Կահերէ քաղաքում մարդասպանի գնդակին զոհ գնացած Ար, Արփիարեանը անյայտ չէ նաև մեր հասարակութեան իւր հրապարակախօսական-զբական գործունէութեամբ: Եւրոպական հրապարակախօսական ձերքերով օժտուած այս գործիչը իւր ամբողջ կեանքը նուերել էր հայ ժողովրդի մտաւոր հորիզոնի բարձրացման: Նա միաժամանակ գրում էր և՝ Պօլսի թերթերում և՝ Կովկասում հրատարակուող «Մշակ»-ում:

«Արեւելքից» անցնելով «Հայրենիք», նաև այստեղ երկար կանգ առաւ և այդ լրագրի ամբողջ աւզգութեան սպի ու շունչ տուողն եղաւ։ Արփիարը նաև բելլէտրիստ էր և ուներ դիւրաշարժ, աշխոյժ գրիչ։ Յայանին է նորա գեղեցիկ վէալը «Կարմիր ժամաւց», տպագրուած «Բանքեր»-ի 1903 թ. Ա. գրքում։ Երկար տարիներ վարեց նաև Թուրքիոյ հայոց ազգ, եթես ժողովի անդամութեան պաշտօնը։ «Մշակում» նաև աշխատակցում էր Հայկակ, Հրազդան և այլ անուններով։

Սպանութեան շարժառիթները տու այժմ անյայտ են։

Ա. Մ.



ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Փղխարքան թոյլատրել է ներկայացնելու հայ բեմերը վրայ երկու նոր պիես՝ «Մագթաղբնէ» Արէլեանի և «Ոչ ոք չունիմ» Գ. Բաշինջաղեանի։

— Լէօն արդէն վերջացրել է «Հայոց նոր սլատմութիւնը սկսած ժշդար» աշխատութեան Ա. հատորը։

— Վրաց գրամատիկական ընկերութիւնը պատրաստութիւններ է տեսանում այս փեարուարին տօնելու վրաց բեմի արժանաւոր մշակ և վրաց հասարակութեան սիրելի գործեց Կ. Գ. Կիպիանու 35 ամեայ բեմական և գրականական գործունէութիւնը։

— Բուլղարիայի թերթերը հալորդում են, որ գեկտ 31-ին Սօֆիայում, Լոնգոն հիւրանոցում մեռել է 0ոկար Խոկենդէօ անունով մի հայ, որ Պօլսից անցնելով Բուլղարիա գործել է քաղաքական—հասարակական առարկում։ Օսկարը աւարտել էր Խտալական համալսարան, ուներ փիլիսոփայութեան առօս տորի ախտղոս և երկար տարիներ խմբագրել է ֆրանսերէն լեզուով «Ա. Բալգարի», «Լ. Էօ դէ Բալգան», «Լ. Է Կուրիէ դէ Բալգան» և «Լ. Է Մէսամէր դէ Բալգան» թերթերը։ Նա եղել է միենոյն ժամանակ և թղթակից եւրոպական քաղաքական թերթերի գետէօ մտօրէն ֆրանսերէն, իտալերէն, հայերէն, թուրքերէն և բուլղարերէն։

«Բուլղարից մամուլը, առանց բացառութեան, մեծ գնահատութեամբ և սքանչացումով է խօսում այս հայ քաղա-